Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, գխ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«05» 03 2018թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համալսարանի խորհրդատուի գլխավոր խնդիրն է՝ ակտիվորեն մասնակցել ուսանողների շրջանում կազմակերպվող ուսումնադաստիարակչական, մասնագիտական և հասարակական աշխատանքներին, ունենալ ուսանողների հետ տարվող աշխատանքների միջոցառումների պլան, առաջադիմության և հաճախումների գրանցամատյան:

1.2. Համալսարանի խորհրդատվական աշխատանքների կազմակերպման ղեկավարը նշանակվում է ռեկտորի հրամանով: Ֆակուլտետների խորհրդատուների ղեկավարները և խորհրդատուները՝ ըստ մասնագիտությունների, նշանակվում են մասնագիտական և տեսական ամբիոնների առաջատար և փորձառու դասախոսներից, որոնց առաջադրում են դեկանները:

1.3. Խորհրդատուի գործունեությունը պետք է նպաստի առողջ մթնոլորտի և համերաշխ կոլեկտիվի ստեղծմանը, ուսանողների շրջանում դաստիարակի հայրենասիրության բարձր զգացում, սեր և հարգանք Համալսարանի, ֆակուլտետի, ամբիոնի և ընտրած մասնագիտության նկատմամբ:

1.4. Ֆակուլտետների խորհրդատուների ղեկավարների և ըստ մասնագիտությունների խորհրդատուների աշխատանքը հանդիսանում է նրանց աշխատանքային գործունեության բաղկացուցիչ մասը:

1.5. Խորհրդատուներն ամիսը մեկ անգամ պետք է հաշվետու լինեն ֆակուլտետի դեկանին:

2. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Խորհրդատուն իրավունք ունի՝

2.1.1. մասնակցելու կուրսերում և խմբերում կազմակերպվող արտադրական խորհրդակցություններին, մասնագիտական և հասարակական միջոցառումներին,

2.1.2. ամրապնդել կապը ամբիոնների և խմբի դասավանդող դասախոսների հետ,

2.1.3. ապահովել խմբի ուսանողների կազմակերպված մասնակցությունը քննություններին,

2.1.4. մասնակցելու խմբերի ավագների ընտրությանը,

2.1.5. զբաղվել ուսանողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության հարցերով,

2.1.6. ծանոթանալ ուսանողի անձնական գործի հետ,

2.1.7. մասնակցել ուսանողին տրվող խրախուսանքներին և տուժերի քննարկմանը:

2.2. Խորհրդատուների պարտականություններն են՝

2.2.1. հետևել ուսանողների ուսումնադաստիարակչական, կուլտուր-կենցաղային և սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը,

2.2.2. աջակցել և հետևել ուսանողների վարձավճարի մուծման գործընթացին՝ համաձայն կնքված պայմանագրի ժամկետների,

2.2.3. օժանդակել շնորհալի ուսանողների ինքնագործունեության դրսևորմանը՝ ներգրավվելով համապատասխան խմբակներում,

2.2.4. պարբերաբար իր կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ֆակուլտետի դեկանին: